

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

07.09.2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերդյանը, Ն.Սարգսյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Խալաթյանը, Հ.Մկրտչյանը, Վ.Հովհաննիսյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը, Ա. Սարգսյանը - մարզպետի օգնականներ
- Հ.Անտոնյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում՝

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց ՝

1. Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Վ.Ասատրյանին, Տ. Բաղդյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների եռամսյակային և ինն ամսվա հավաքագրման պլանները կատարելու ուղղությամբ:

/ժամկետ՝ մինչև 30.09.15թ./

2. Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա. Մեկշաբաթյա ժամկետում ապահովել ստորաբաժանումների աշխատակիցների կողմից անձնական տվյալների /այդ թվում նաև հեռախոսահամարների/ ներկայացումը անձնակազմի կառավարման բաժին:

բ. Յուրաքանչյուրն իր մասով՝ մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ստորաբաժանման ընթացիկ հաշվետվությունը / կիսամյակային կամ 8 ամսվա կտրվածքով/:

3. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել «Բերքի տոն»-ի միջոցառման պատշաճ կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

4. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝

Քննարկել և ներկայացնել առաջարկություններ ՀՀ «Անկախության օրվա» միջոցառումների վերաբերյալ:

/ ժամկետ մեկ շաբաթ/

5.Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Փոխմարզպետների հետ, համայնքների ղեկավարների մասնակցությամբ, քննարկել ԱԳԿՊԿ-ի <<Գեոդեզիայի և Հողային Պետական Տեսչության>> կողմից իրականացված ստուգումների վերաբերյալ ակտերը:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ա.Մակարյան
Հեռ. 0322/4- 32- 99/